

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ
2019 թ. հունվարի 25-ի թիվ 5 նիստի

ԼՍԵՑԻՆ.- 2018/2019 ուստարվա հեռակա ուսուցման ավարտական կուրսի մագիստրոսական թեզերի նախապաշտպանության արդյունքների մասին ամբիոնների վարիչներ Դ. Վ. Պետրոսյանի և Մ. Մ. Հովսեփյանի հաղորդումը:

ԼՍԵՑԻՆ.- Քննաշրջանի ընթացքի մասին Ա. Ռ. Մենեմշյանի հաղորդումը:

ԼՍԵՑԻՆ.- քան. գիտ թեկնածու, դոցենտ Հայկ Նազարյանի, սոց. գիտ. թեկնածու Արեմ Սկրտչյանի և սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ Գագիկ Թումանյանի առաջարկած «Տեղեկատվական ոլորտի մարտահրավերները հայաստանյան քաղաքացիական ինքնության ձևավորման գործընթացում» հետազոտական ծրագիրը ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի հայտարարած «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2019» մրցույթին մասնակցության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Շ. Ավետիսյան, Դ. Հ. Սլավերդյան, Ա. Ռ. Մենեմշյան, Ն. Է. Վարդանյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- «Տեղեկատվական ոլորտի մարտահրավերները հայաստանյան քաղաքացիական ինքնության ձևավորման գործընթացում» հետազոտական ծրագիրը երաշխավորել մասնակցելու «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2019» մրցույթին:

ԼՍԵՑԻՆ.- ԵՊՀ ժուռնալիստիկայի և Վարչավայի պետական համալսարանի ժուռնալիստիկայի և գրահրատարակչական գործի ֆակուլտետների միջև

համագործակցության հեռանկարների մասին Դ. Վ. Պետրոսյանի հաղորդումը:

ԼՍԵՑԻՆ.- Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի հեռակա ասպիրանտ Նաիրա Համբարձումյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավարին հաստատելու խնդրանքով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենենշյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ա) Ն. Համբարձումյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայ-ադրբեջանական հակամարտության լուսաբանումը հայաստանյան հեռուստատեսերում (2010-2020 թթ.)» վերնագրով:

բ) Գիտական ղեկավար նշանակել քան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ. Հովսեփյանին:

ԼՍԵՑԻՆ.- Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի արտաքին ժամավճարային հիմունքներով դասախոս, ք.գ.թ. Լուսինե Խաչատրյանի «Մխիթարյանների մամուլը («Բազմավեպ»-ը 1843-1880-ական թթ.)» ուսումնասօժանդակ ձեռնարկը տպագրության երաշխավորելու խնդրանքով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենենշյան, Գ. Գ. Ջուլիակյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Լ. Ա. Խաչատրյանի «Մխիթարյանների մամուլը («Բազմավեպ»-ը 1843-1880-ական թթ.)» ուսումնասօժանդակ ձեռնարկը երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ.- 2018/19 ուտարվա երկրորդ կիսամյակում «Հարություն քահանա Շմավոնյան» և «Արտաշես Քալանթարյան» կրթաթոշակները հատկացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենենշյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 2018/19 ուտարվա երկրորդ կիսամյակում ֆակուլտետի անվանական կրթաթոշակի հավակնորդներին թողնել անփոփոխ.

«Հարություն քահանա Շմավոնյան» - **Թամարա Ավետիքի Գասպարյան,**
բակալավրիատ, առկա ուսուցում, 4-րդ կուրս

«Արտաշես Քալանթարյան» - **Աննա Սպարտակի Կոստանյան,** *բակալավրիատ,*
առկա ուսուցում, 4-րդ կուրս

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ



[Handwritten signature]

Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ա. Ռ. ՄԵՆԵՄՇՅԱՆ